Հայտարարություն

Ծրագրի աշխատանքներում ընտրվելիք անհատ խորհրդատուների

Ճարտարապետական և Շինարարական մասնագիտությունների ուսումնական ծրագրերի արդիականացումը՝ նորագույն տեխնոլոգիաներով հագեցած ուսումնագիտափորձարարական լաբորատորիայի ստեղծմամբ ծրագրի շրջանակներում ճարտարապետաշինարարական մասնագիտությունների կրթական ծրագրերի վերանայման և արդիականացման նպատակով խորհրդատուների ընտրության մասին

«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» Հիմնադրամը, Ճարտարապետական և Շինարարական մասնագիտությունների ուսումնական ծրագրերի արդիականացումը՝ նորագույն տեխնոլոգիաներով հագեցած ուսումնագիտափորձարարական լաբորատորիայի ստեղծմամբ ծրագրի շրջանակներում ճարտարապետաշինարարական մասնագիտությունների կրթական ծրագրերի վերանայման նպատակով հայտարարում է խորհրդատուների ընտրության մրցույթ: Խորհրդատուները պետք է վերանայեն հետևյալ մասնագիտությունների կրթական ծրագրերը «Արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն», «Շինարարական նյութերի, պատրաստվածքների և կոնստրուկցիաների արտադրություն», «Տրանսպորտային ուղիների շինարարություն և շահագործում», «Շենքերի նախագծում», «Ճարտարապետություն», «Բնապահպանություն և բնօգտագործում», «Կենսագործունեության անվտանգություն»: Ընտրված խորհրդատուները պետք է ներկայացնեն ճարտարապետության, շինարարության կամ էկոլոգիայի բնագավառներ: Մասնավորապես, ընտրվելու համար կարող են դիմել՝ կրթության քաղաքականություն մշակողներ, մանկավարժ-դասախոսներ, հոգեբաններ և կրթության ոլորտի այլ մասնագետներ:

Տվյալ խորհրդատվական ծառայությունները ներառում են հետևյալ աշխատանքները ըստ համապատասխան կրթական ծրագրերի.

• Կրթական ծրագրերի վերջնարդյունքների ձևակերպում:

• Կրթական ծրագրերի ուսումնական պլանների մշակում:

• Կրթական ծրագրերի ուսումնական պլաններին համապատասխան յուրաքանչյուր դասընթացի վերջնարդյունքների ձևակերպում:

• Կրթական ծրագրերի ուսումնական պլաններին համապատասխան յուրաքանչյուր դասընթացի ծրագրի մշակում:

• Մշակված նյութերի հիման վրա նշված կրթական ծրագրերի համար տեղեկագրային փաթեթի պատրաստում (ուսումնական գործընթացի ժամանակացույց, կրթական ծրագրի վերջնարդյունքներ, ուսումնական պլան, դասընթացի ծրագիր՝ ներառյալ դասընթացի ծրագրի վերջնարդյունք):

• Իրականացված աշխատանքների վեաբերյալ փուլային (1 փուլ = 1 ամիս) հաշվետվությունների ներկայացում փուլի ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

Խորհրդատվական աշխատանքները պետք է իրականացվեն հետևյալ ժամանակացույցով՝

h/h	Իրականացվող գործողություն	ժամանակահատվածը
Տեղական խորհրդատվություն (ճարտարապետաշինարարական մասնագիտությունների կրթական ծրագրերի վերանայում և արդիականացում տեղական փորձագետների կողմից) հետևյալ մասնագիտությունների գծով		01.09.16թ-31.10.17թ.
1	Արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն	01.09.16թ-31.01.17թ.
2	Շինարարական նյութերի, պատրաստվածքների և կոնստրուկցիաների արտադրություն	01.09.16թ-31.01.17թ.
3	Տրանսպորտային ուղիների շինարարություն և շահագործում	01.10.16թ-28.02.17թ.
4	Շենքերի նախագծում	01.03.17թ-31.07.17թ.
5	Ճարտարապետություն	01.06.17թ-31.10.17թ.
6	Բնապահպանություն և բնօգտագործում	01.06.17թ-31.10.17թ.
7	Կենսագործունեության անվտանգություն	01.06.17թ-31.10.17թ.

Թեկնածուներին ներկայացվող նվազագույն պահանջներն են.

1.ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ

- բարձրագույն կրթություն՝ ճարտարապետության, շինարարության կամ էկոլոգիայի ոլորտի (ցանկալի է նաև գիտական աստիճան),
- վերջին տասը տարվա ընթացքում առնվազն հինգ տարվա աշխատանքային փորձ նշված ոլորտում կամ ճարտարագիտական ոլորտի բարձրագույն կրթության համակարգում,

- հայերենի, ռուսերենի իմացություն (անգլերենի իմացությունը ցանկալի է),
- համակարգչային հմտություններ՝ Microsoft Word, Excel, Internet:

---

30 միավոր

2.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐ

- ուսումնական գործընթացի պատկերացում,
- կրթական ծրագրերի մշակմանը ներկայացվող պահանջների իմացություն,
- դիտարկման, ուսումնասիրության, վերլուծության և գնահատման փորձառություն,
- թիմային աշխատանքի, արդյունավետ հաղորդակցման և համագործակցելու կարողություն/փորձառություն:

---

30 միավոր

3.ՀԱՏՈՒԿ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐ

- կրթության ոլորտում գործունեության փորձառություն (դասավանդում, վերլուծական աշխատանքներ, կրթական քաղաքականության ու հիմնական իրավական ակտերի իմացություն, վերապատրաստումներ, նորամուծություններ, մասնակցություն ծրագրերին և այլն)
- մեթոդաբանական աշխատանքի փորձ
- ռազմավարությունների և/կամ հայեցակարգերի մշակման փորձ
- առաջարկությունների կազմման և ներկայացման փորձ

---

40 միավոր

Դիմող թեկնածուները դիմումին կից պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

• Ինքնակենսագրական տվյալները (CV), որը պետք է պարունակի դիմողի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝ անունը, ազգանունը, ծննդյան թիվը, կրթությունը, մասնագիտությունը, մանրամասն աշխատանքային փորձը,

• Կրթությունը և փորձը հիմնավորող փաստաթղթեր:

Համապատասխան փորձ ունեցող մասնագետները կարող են դիմել «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» Հիմնադրամ՝ ք. Երևան, Վ.Տերյան փող. 105 հասցեով, (էլ. փոստ. info@nuaca.am) մինչև հունիսի <<09>>, 2016թ., ժամը 13:00-ն:

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք դիմել վերոհիշյալ հասցեով կամ 58-37-73 հեռախոսահամարով: